



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՅ**

« 10 » հունվարի 2017 թ.

№ 2/10-ՆԿ

Հ Ր Ա Մ Ա Ն

**Ն.ՆԱԿԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ Տ.ՄԱՆԱՆԴՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննությունն անցկացնող հանձնաժողովի 2016 թվականի թիվ 34/2016 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի Գյումրու տարածքային հարկային տեսչության պետի տեղակալի ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող Նահապետ Նահապետյանին Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հայտարարել <<ԽԻՍ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ>>:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի Գյումրու տարածքային հարկային տեսչության ընթացիկ հսկողության բաժնի հարկային տեսուչ Տիգրան Մանանդյանին <<Հարկային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հայտարարել <<ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ>>:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.
 - սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ